

գ. ՄԱԼԽԱՍԵԱՆ ԵՌՎՀԱՆՆԷՍ

Այժմեան ժողովրդական լեզուով գրող վիպագիրներից մէկը , ծն. Հայոց Ախալքալաքի Սուլդա գիւղում 1866 թ. Սեպտ. 10-ին : Հայրը քահանայ է : Մօտ 7 տարեկան հասակից ուսել է գիւղի խայֆայի մօտ եւ 10 տարեկան արժանացել «Յայսմաւուրք» կարգալու (Տես Հաւատքի շուրջը — Հօրօտ Մորոտ Ա. մաս) , եւ յետոյ էլ անցել՝ Կարգախի խայֆայի մօտ է ուսել : 1879 թ. մի երեկոյ փախչելով հորեւան գիւղ, այնտեղից մի եւրոպական դերձակի հետ գնում է Հատիճոյ վանք եւ մտնում տեղւոյն ուսումնարան , որտեղ մնացել է մէկ տարի : Այդ տեղից էլ անցնում է Ալէքսանդրապօլ տեղւոյն ծխական ուսումն. սովորելու եւ վերջապէս 1881 թ. գնում է Ս. Էջմիածին եւ մտնում Գէորգեան ճեմարան , որտեղից 1885 թ. արձակւում է մի ուսուցիչ վարդապետին ապտակելու համար : 1885/86. պատրաստուելով , փորձ է անում Ներսիսեան դպրոց մտնելու , սակայն մերժումն է ստանում : Այնուհետեւ օսերէնից պարապելով, 1888 թ. քննութիւն տալով եւ ուսաց ուսումնարանական վարչութիւնից ուսուցչական վկայաթուղթ ստանալով (ցէնդ) կարգւում է Զխուրի Հայոց ծխ. ուս. ուսուցիչ 88/89 թ. 89/91 . Ախալքա, 91/92 թ. Սուրամ իրիււ աւագ ուսուցիչ , 92/96 թ. տեսուչ Տրփխի կուկիոյ Նորաշէն Ս. Աստուածածին եկեղեցու ծխ. ուսումնարանի, 96/97 թ. Մէյդանի Ա. Գէորգ եկ. ծխ. ուսումնարանի : 1896 թ. հաշուապահութիւն սովորելով սկսել է մասնաւոր պաշտօններ վարել Տրփխի , Եււշի - Սուրբարեան Եղբայրների դրասենեակում եւ ապա Բագու «Շղթայ» բնկերութեան մէջ , իսկ 1902 թ. Տփխի Գաղաթային մասվաճառական գլխ. գրասենեակում , Մայիստեանն սկսել է ոտանաւորներով , որոնցից առաջինը անտիպ է : 1887 թ. թղթակցել է Մշակ-ին իսկ 1889 թ. Նոր-Պար-ին , միեւնոյն ժամանակ զբւլ է Արաքս-ում , Մուրճ-ում, Աղբիւր-ում, (բանաստեղծութիւններ) եւ Ազգագրական Հանդէս-ում : Նրա գրուածներն են «Պատանեկան Յուշեր» (բանաստ.) , «Երգում» (վէպ) , «Հօրօտ-Մորոտ» ա. եւ ք. մասերը , որտեղ ժողոված են մի շարք հետաքրքիր վէպիկներ եւ պատկերներ Հայոց Ախալքալաքի գիւղական կեանքից վերցրած , գրուած տեղական բարբառով . «Հայ գեղջուկի այրում» ա. եւ ք. մասերը , որ լոյս տեսան նախ Ազգ. Հանդէսում , իսկ յետոյ առանձին գրքերով : Սոքա իսկապէս մեր մէջ առաջին կարգի եւ գեղարուեստական ժողովածուներ են , որտեղ տպւում են գիւղական թոյր գործիքների եւ իրերի պատկերներն կարեւոր բացատրութիւններով , Բացի այս թարգմանել է սերէնից Լեւոնտովի «Մեր ժամանակի հերոս» գիրքը , որ տպուել է Արաքսում : Յօդուածները նա առհասարակ գրել է այլ եւ այլ կեղծանունաց ապի եւ շօշափել ժամանակակից հասարակական կեանքը եւ մեր առօրեայ գրական եւ գեղարուեստական մասի գրութիւնը :

Տփխիս 19 Նոյեմ.

ՀԱՅԿ ՏԷՐ-ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆԸ